ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2023-2025թթ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ.

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄ
| 2023-2024

Զեկույցը հրապարակվել է ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Զեկույցում ներկայացված կարծիքներն ու վերլուծությունները հեղինակներինն են և չեն ներկայացնում ժողովրդավարության զարգացման հիմնադրամի կարծիքներն ու դիրքորոշումները:

Հետազոտությունն իրականացվել է «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2023-2025թթ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ.

ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄ | 2023-2024

© 2024. «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ,
ՎԱՆԱՁՈՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 6

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 11

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 12

Գործողություն 2.2. Զինված ուժերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը: 13

Գործողություն 2.5. Վերապատրաստել զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով: 14

Գործողություն 2.7. ՀՀ պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում 1 մասնագետի պաշտոնի անձնագրում սահմանել հոգեբանության բարձրագույն կրթություն ունենալու պարտադիր պայման: 17

Գործողություն 2.8. Ամրապնդել ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները: 18

Գործողություն 2.12. Ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ: 19

Գործողություն 2.13. Երևանում և առնվազն 3 մարզերում ստեղծել խոշտանգումից տուժած անձանց աջակցության (իրավական, հոգեբանական, սոցիալական և այլն) կենտրոններ, որոնց միջոցով կբարելավվի խոշտանգումներից տուժած անձանց առողջական վիճակը: 20

ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 21

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավելի քան 10 տարի «Խաղաղության երկխոսություն» հկ-ն գործունեություն է ծավալում ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակը բարելավելու ուղղությամբ: 2015թ.-ից սկսած, կազմակերպության մշտադիտարկող խումբը պարբերական գնահատում է իրականացնում ոլորտում մարդու իրավունքների կարգավիճակի վերաբերյալ: «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նաև ՀՀ կառավարության 2023թ.-ի սեպտեմբերի 28-ին ընդունած 1674-Լ որոշմամբ հաստատված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի կատարման համակարգող խորհրդի կազմում է: Կազմակերպությունը, միաժամանակ, բացահայտում է պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերները և հնարավորինս աջակցում դրանց լուծմանն ուղղված ջանքերին:

Այս հաշվետվությունը, մասնավորապես, ուղղված է ՀՀ կառավարության կողմից նախագծված 2023-2024 թվականների գործողությունների մշտադիտարկմանը՝ թիրախավորելով պաշտպանության ոլորտում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելումը:

Մշտադիտարկման գործընթացը մշակվել է երկու հիմնական նպատակներով.

- *գնահատել կառավարության կողմից մշակված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի համապատասխանությունն իր նպատակներին,*
- *հասկանալ՝ արդյո՞ք գործողություններն իրականացվել են ըստ ծրագրի, չափել այդ գործողությունների ունեցած ներդրումը նախանշված ընդհանուր նպատակներին հասնելու ճանապարհին:*

Ըստ 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելման հետ կապված համընդհանուր նպատակը «քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, կալանավայրերում և քրեական դատավարության ընթացքում խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի լիարժեք իրացումն ապահովելն է մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման և անհրաժեշտ գործիքների ու մեխանիզմների ներդրման միջոցով»: ՀՀ կառավարությունը, մասնավորապես, նախանշել է զինված ուժերում խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի պաշտպանությանն ուղղված հետևյալ գործողությունները.

- Զինված ուժերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին

անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը:

- Վերապատրաստել զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով:
- ՀՀ պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում 1 մասնագետի պաշտոնի անձնագրում սահմանել հոգեբանության բարձրագույն կրթություն ունենալու պարտադիր պայման:
- Ամրապնդել ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները:
- Ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ:
- Երևանում և առնվազն 3 մարզերում ստեղծել խոշտանգումից տուժած անձանց աջակցության (իրավական, հոգեբանական, սոցիալական և այլն) կենտրոններ, որոնց միջոցով կբարելավվի խոշտանգումներից տուժած անձանց առողջական վիճակը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀ կառավարության կողմից ընդունված 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների համապատասխանությունը գնահատելու համար «Խաղաղության երկխոսություն» հկ-ն մի շարք հարցումներ է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազությանը, պաշտպանության նախարարությանը և քննչական կոմիտեին: Բացի այդ, կազմակերպությունը մանրակրկիտ անանուն հարցազրույցներ է անցկացրել նախկին ժամկետային զինծառայողների հետ՝ աշխարհագրական լայն շրջանակ ընդգրկելու համար ներառելով Երևանը և ՀՀ գրեթե բոլոր մարզերը:

Հարցումներն ու դրանց արդյունքները պարզում են, որ կառավարությունը քայլեր է ձեռնարկել զինված ուժերում խոշտագումների և դաժան վերաբերմունքի կանխարգելման ուղղությամբ, սակայն զեկուցման մեխանիզմների, ինստիտուցիոնալ կարողությունների և գործերի քննության ժամկետների ողջամտության և արդյունավետության հարցերում զգալի բացթողումներ դեռ նկատվում են:

Ընթացիկ գործերի մեծ թիվը և պաշտոնական ալիքներով այդ գործերի վերաբերյալ հաղորդումների սակավությունն ընդգծում են զեկուցման և գործերի քննության ավելի ուժեղ, անկախ մեխանիզմների, ինչպես նաև տուժածներին ուղղված համապարփակ աջակցության անհրաժեշտությունը:

ՀՀ դատախազությունը և քննչական կոմիտեն վերջին տարիներին հայտնել են զինված ուժերում խոշտանգումների և դաժան վերաբերմունքի զգալի թվով դեպքերի մասին: «Խաղաղության երկխոսության» հարցումներին ի պատասխան, դատախազությունը հայտնել է վերջին երեք տարվա ընթացքում ստացած 21 հաղորդումների մասին, որոնցից 16-ը վերաբերում են ՀՀ ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից տուժողներին խոշտանգելու դեպքերին. սա առանձնահատուկ մտահոգություն է առաջացնում, քանի որ ռազմական հիերարխիայի որոշակի սեգմենտներում հստակ համակարգային խնդրի մասին է վկայում: Քննչական կոմիտեն հայտնել է 17 հաղորդման մասին այն պահից ի վեր, երբ իր մասնագիտացված ստորաբաժանումը 2022 թվականի հուլիսի 28-ին ստանձնեց խոշտանգումների դեպքերի քննության պատասխանատվությունը: Սա ընդգծում է այն փաստը, որ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերը շարունակում են առանցքային խնդիր համարվել ՀՀ զինված ուժերում:

Ըստ դատախազության և քննչական կոմիտեի «Խաղաղության երկխոսությանը» տրամադրված տվյալների՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի հատկանիշներ պարունակող մի քանի դեպքերով հարուցվել են քրեական վարույթներ, որոնք փաղկապակցված են նաև բանակում ինքնասպանության ու սպանության դեպքերի հետ: Հարուցված գործերից մի քանիսը կարճվել, մյուսները

շարունակվում կամ հետաձգվել են՝ մեղադրյալի քրեական հետապնդումից խուսափելու պատճառով: Նկատվում է նաև շոշափելի տարբերություն արձանագրված և հանգուցալուծման փուլին հասած դեպքերի թվի միջև: Քննչական կոմիտեն տեղեկատվություն տրամադրել է այժմ վարույթում գտնվող գործերի մասին, սակայն պետք է հաշվի առնել նաև, որ որոշ գործեր կասեցվել կամ կարճվել են: Այս ամենը իրականացվող վարույթների հիմնավորվածության և արդյունավետության մասին լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

Վերոնշյալ արդյունքները վկայում են, որ քննչական մարմիններն ակտիվորեն հետաքննում են խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերը, սակայն քորձերի քննության ձգձգումները և չլուծված գործերի թիվը փաստում են քննիչների և դատախազների համար լրացուցիչ ռեսուրսների և վերապատրաստումների անհրաժեշտության մասին: Քննչական կոմիտեի դիրքի ամրապնդումը, հատկապես այն ստորաբաժանումներում, որոնք զբաղվում են խոշտանգումների դեպքերի բացահայտմամբ, առանցքային է վարույթների արդյունավետության ու արագության բարելավման համար:

Զարմանալիորեն, ՀՀ ՊՆ-ն հայտնել է, որ վերջին երեք տարվա ընթացում խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ ոչ մի բողոք չի ներկայացվել ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում գործող թեժ գիծ: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանության ՀՀ ազգային ռազմավարությունից բխող նախկին (2020-2022 թվականների) գործողությունների ծրագրի 18-րդ գործողությունը ևս միտված էր զինված ուժերում խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի մասին զեկուցող անձանց անվտանգությունը երաշխավորող մեխանիզմ ներդնելուն: Ըստ 2022 թվականին պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ ՊՆ թեժ գիծը պետք է զբաղվեր այս հարցով՝ գաղտնի պահելով զինծառայողների մասին տվյալները և նրանց հեռախոսահամարները: Հաղորդումների բացակայությունը, սակայն, վկայում է այն մասին, որ ՊՆ-ում գործող ներքին զեկուցման մեխանիզմները, մասնավորապես թեժ գիծը, կամ թերօգտագործված են, կամ զինծառայողների և նրանց ընտանիքների համար վստահելի չեն: Բացի այդ, «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից 2020-2024 թվականների ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայություն անցածների հետ անցկացրած մանրակրկիտ անանուն հարցումները վկայում են ՊՆ զեկուցման մեխանիզմների նկատմամբ վստահության պակասի կամ զանազան խոչընդոտների առկայության մասին (օրինակ՝ վրեժխնդրության վախը կամ անանունության բացակայությունը)՝ թույլ չտալով զինծառայողներին և նրանց ընտանիքներին օգտագործել զեկուզման այդ միջոցը:

Պաշտպանության նախարարությունը նաև նշել է, որ իր թեժ գծի համար նոր ներքին իրավական ակտի մշակման փուլում է գտնվում: Այնուամենայնիվ, լրջագույն բարեփոխումներ պետք է իրականացվեն, հատկապես այնպիսիք, որոնք վերաբերում են զեկուցումների ավելի համապարփակ մեխանիզմներին և դաժան

վերաբերմունքի հստակ սահմանմանը, ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը բարձրացնելու համար:

Այսպիսով, ՀՀ կառավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրում ներառված գործողությունները էական դեր են խաղում զինված ուժերում խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերին վերաբերող խնդիրների լուծման հարցում, հատկապես հաշվի առնելով պատկան մարմիններից ստացված պատասխանները, ինչպես և նախկին ժամկետային զինծառայողների հետ անցկացրած հարցազրույցները, որոնք փաստում են բռնության դրսևորումների շարունակական բնույթը՝ ընդգծելով առաջարկվող մեխանիզմների կարևորությունը: Սակայն, գոյություն ունեն մի շարք հակասություններ, որոնք հարկավոր է լուծել նշված գործողությունների ժամանակին և արդյունավետ իրականացման համար:

Անանուն հաղորդումներ ներկայացնելու պաշտոնական մեխանիզմների մշակումը կարող է հետագայում քաջալերել տուժածներին առանց վախի և ճնշվածության զգացումի զեկուցել խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին: ՊՆ թեժ գծի միջոցով ստացվող հաղորդումների բացակայությունը ևս ընդգծում է անանուն մեխանիզմների անհրաժեշտությունը: Ամեն դեպքում, այստեղ հարց է առաջանում. զեկուցումների բացակայությունը պայմանավորված է թեժ գծի գործունեության նկատմամբ վստահության պակասի, հետագայում վրեժխնդրության վախի կամ թեժ գծի անարդյունավետ աշխատանքով, թե՞ հատկապես նշված պաշտոնական մեխանիզմի անկատարության պատճառով: Հակասությունը կապված է պաշտպանության ոլորտում ավելի լայն համակարգային խնդիրների հետ, ինչպիսիք են վրեժխնդրության վախը, անանունության բացակայությունը և ինստիտուցիոնալ հաշվետվողականության մեջ առկա բացթողումները, որոնք բոլորն էլ նվազեցնում են թեժ գծի արդյունավետությունը: Այսպիսով, հարց է առաջանում. արդյո՞ք պետք է կենտրոնանալ թեժ գիծը խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի դեպքերի զեկուցման համար արդյունավետ գործիքի վերածելու գաղափարի վրա, թե՞ անհրաժեշտ է մշակել այլընտրանքային մեխանիզմներ զեկուցումներն ապահով և անանուն եղանակով ստանալու համար:

Դաժան վերաբերմունքի կանխարգելման թեմայի շուրջ հրամանատարական կազմի և ռազմական ոստիկանության սպաների վերապատրաստումները վճռական դեր ունեն: Ըստ դատախազությունից ստացված պատասխանի՝ ռազմական ոստիկանության անձնակազմի կողմից դաժան վերաբերմունքի փաստով 16 քրեական վարույթ է հարուցվել, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է այս վերապատրաստումների անհրաժեշտությունը: Ռազմական ոստիկանության ներգրավվածությունը խոշտանգումների ենթադրյալ դեպքերին մեծ ազդակ է այս հաստատության ներսում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկման և ըմբռնման բարելավման անհրաժեշտության մասին:

Սա առաջին պլան է բերում նաև ռազմական ոստիկանության նման պահպանողական և փակ հաստատությունների, վերջիններիս շարունակական

չարաշահման գործելաոճ որդեգրած անձնակազմի հետ աշխատելու անհրաժեշտությունը, ինչը կապված է ավելի համապարփակ բարեփոխումների անհրաժեշտության հետ, օրինակ՝ ավելի լավ վերահսկողություն և հաշվետվողականություն ռազմական ոստիկանության ներսում:

Պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի մասնագետի համար հոգեբանության գծով բարձրագույն կրթություն ունենալու պարտադիր պայմանի ներառումը ուղիղ կապ ունի խոշտանգումների և դաժան վերաբերմունքի հոգեբանական ասպեկտների լուծման հետ: Չնայած այն բանին, որ ՊՆ-ն իր իսկ թեժ գծով որևէ ուղղակի բողոք չի ստացել, փորձառու հոգեբանի առկայությունը կարող է բարելավել մարդու իրավունքների պոտենցիալ խախտումներին (այդ թվում՝ խոշտանգումներին) ավելի արդյունավետ կերպով արձագանքելու կարողությունները: Կառույցի ներսում որէ փորձառու մասնագետի ներկայությունը, սակայն, հնարավոր է, արդյունավետ չլինի առանց զեկուցումների մեխանիզմի նկատմամբ վստահության վերականգնման:

Քննչական կոմիտեի, հատկապես խոշտանգումների դեպքերի հետաքննությունն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման դիրքի ամրապնդումը խիստ կարևոր նշանակություն ունի: Ռեսուրսների համալրումը կարող է արագացնել այս վարույթների իրականացումը և բարելավել վերջիններիս արդյունավետությունը:

Հարուցված և տրամաբանական ավարտին հասցված գործերի թվի մեծ տարբերությունը (իմա՝ գործերի լուծման դանդաղ ընթացքը և դրանց կարճումը), սակայն, առիթ են տալիս թե՛ քննության գործընթացի, թե՛ դատական համակարգի ընդհանուր արդյունավետության շուրջ մտահոգության:

«Ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեբանական տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցի ընդունումը կարևոր է խոշտանգումների դեպքերի լուծմանը հետևողական և միջազգային չափանիշներին համապատասխան մոտեցում ցուցաբերելու համար: Չնայած պատկան մարմիններից ստացված պատասխաններն ուղղակիորեն չեն մեջբերում այս ուղեցույցը՝ նշված քրեական վարույթների մեծ մասը, մասնավորապես նրանք, որոնք կապված են խոշտանգումների ու ինքնասպանության դեպքերի հետ, ընդգծում են դատական գործընթացում այս արտահայտությունների համար հստակ սահմանումներ տալու անհրաժեշտությունը: Ուղեցույցը կարող է նպաստել նման իրավախախտումների պատշաճ դասակարգմանն ու վարմանը: Համենայնդեպս, սա չի կարող «համադարման» համարվել այն դեպքում, երբ ավելի շատ համակարգային խնդիրներ մնան չլուծված: ՀՀ 2003 թվականի քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի, կամ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված նոր օրենսդրության 450 հոդվածի համաձայն, օրինակ, խոշտանգում է համարվում « …պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու

նպատակով, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով»:

ՀՀ քրեական օրենսգիրքը հստակ պատասխանատվություն չի սահմանում անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի միջոցների կիրառման համար: Քրեական օրենսգրքի 119-րդ, կամ քրեական նոր օրենսգրքի 196-րդ հոդվածները պատասխանատվություն են սահմանում ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելու համար, եթե բացակայում են հոդված 309.1-ով (450) սահմանված հանցագործության բնութագրերը. այսինքն, եթե, օրինակ, նման ցավ կամ տառապանք պատճառող անձը պաշտոնատար կամ պետական մարմինների ներկայացուցիչ չի եղել, կամ եթե նշված գործողությունները դիտավորյալ բնույթ չեն կրել:

Իրավական պրակտիկայում զինված ուժերի ներսում խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի դեպքերը հաճախ դասակարգվում են որպես պաշտոնական լիազորությունների անցում (քրեական օրենսգիրք, հոդված 309) կամ իշխանության չարաշահում (քրեական օրենսգիրք, հոդված 375):

Եվ, վերջապես, առանցքային է կառավարության կողմից առաջադրված Երևանում և երեք մարզերում խոշտանգումներից տուժած անձանց համար աջակցության կենտրոններ ստեղծելու նախագիծը: Թե՛ դատախազությունը, թե՛ քննչական կոմիտեն արձանագրել են ենթադրյալ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի զգալի թվով դեպքեր: Նման կենտրոնների բացումն էական իրավական, հոգեբանական և սոցիալական աջակցություն կտրամադրի տուժածներին: Վերջին երեք տարվա ընթացքում ՊՆ թեժ գծի միջոցով խոշտանգումների մասին բողոքներ չարձանագրվելու փաստը ևս մեկ անգամ ընդգծում է արտաքին, ռազմական հաստատություններից անկախ օժանդակ կառույցների ստեղծման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով որևէ դատական ատյանի կողմից խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի դեպքերը հաստատող վերջնական որոշումների բացակայությունը (այլ կերպ ասած՝ քննչական գործընթացների և դատական համակարգի ընդհանուր անարդյունավետությունը), հարց է առաջանում, թե ո՞վ կլինի աջակցման կենտրոնների շահառուն: Նկատելի խզում կարելի է կանխատեսել այս կենտրոնների գոյության և դատական համակարգի՝ խոշտանգումներից տուժած անձանց համար օրինական վավերացում տրամադրելու հնարավորության միջև, ինչը կանխավ կասկածի տակ է դնում դրանց իրական օգտակարությունն՝ առանց բարելավված համակարգային հաշվետվողականության:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Զինված ուժերում խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի պաշտպանության համար նախատեսվել են հետևյալ գործողությունները.

- **Գործողություն 2.2.** Զինված ուժերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը:
- **Գործողություն 2.5.** Վերապատրաստել զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով:
- **Գործողություն 2.7.** ՀՀ պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում 1 մասնագետի պաշտոնի անձնագրում սահմանել հոգեբանության բարձրագույն կրթություն ունենալու պարտադիր պայման:
- **Գործողություն 2.8.** Ամրապնդել ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները:
- **Գործողություն 2.12.** Ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ:
- **Գործողություն 2.13.** Երևանում և առնվազն 3 մարզերում ստեղծել խոշտանգումից տուժած անձանց աջակցության (իրավական, հոգեբանական, սոցիալական և այլն) կենտրոններ, որոնց միջոցով կբարելավվի խոշտանգումներից տուժած անձանց առողջական վիճակը:

2024 թվականի առաջին կիսամյակի դրությամբ՝ կառավարությունը հայտնել է գործողություններ **2.5-ի**, **2.8-ի** և **2.12-ի** լիակատար իրականացման մասին: Մյուս գործողությունների իրականացումն ընթացքի մեջ է:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գործողությունների ծրագրով՝ զինված ուժերում խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողությունների խմբի համար նախանշված են ակնկալվող երկու հիմնական արդյունքներ.

- *նախ և առաջ, ակնկալվում է ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժամիջոցների կիրառման դեպքերի մասին զեկուցելու արդյունավետ մեխանիզմներ և եղանակներ,*
- *այնուհետև, մինչև 2025 թվականի վերջը նախատեսվում է 70 տոկոսով կրճատել զինված ուժերում վերադասների կողմից ենթակաների նկատմամբ բռնության կիրառման դեպքերի, ինչպես նաև զինծառայողների կողմից ինքնավնասման դեպքերի քանակը:*

Փաստաթուղթը տրամադրում է նաև ելակետային տվյալներ.

Զինված ուժերում վերադասների կողմից ենթակաների նկատմամբ բռնության դեպքեր

2020թ.՝ 16 դեպք
2021թ.՝ 18 դեպք
2022թ.՝ 35 դեպք

Զինված ուժերում զինծառայողների կողմից ինքնավնասման դեպքեր

2020թ.՝ 94 դեպք
2021թ.՝ 94 դեպք
2022թ.՝ 107 դեպք

Հատկանշական է, որ ելակետային տվյալներն այս դեպքերը դասակարգում են որպես «վերադասների կողմից բռնության կիրառում ենթակաների նկատմամբ», ինչը ՀՀ օրենսդրության համաձայն ենթադրում է, որ այս գործողությունները նպատակաուղղված չէին տեղեկատվություն կամ խոստովանություններ ստանալուն, որևէ արարքի համար պատժելուն, ենթակային վախեցնելուն կամ հիմնված չէին խտրականության վրա:

Նախկին պարտադիր ժամկետային զինծառայողների հետ «Խաղաղության երկխոսություն» հկ-ի անցկացրած հարցազրույցների ընթացքում, սակայն, հարցվողներից ոմանք պատմել են վերադասների կողմից ենթակաների նկատմամբ բռնության կիրառման դեպքերի մասին, որոնք, փաստորեն, միտված էին տեղեկատվություն կամ խոստովանություններ ստանալուն, որևէ արարքի համար պատժելուն, ենթակային վախեցնելուն կամ հիմնված էին խտրականության վրա: Վերոգրյալը տարատեսակ հարցերի պատճառ է դառնում.

ինչպես և ինչու են այդ դեպքերը դասակարգվել այնպես, իբր չեն հետապնդում վերոնշյալ նպատակները, և խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելման հարցում որքանով է ՀՀ օրենսդրությունը համապատասխանում միջազգային չափանիշներին:

Գործողություն 2.2. Ձինված ուժերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը:

Այս գործողության վերջնաժամկետը 2024 թվականի երկրորդ կիսամյակն է:

Որպես այս գործողության ելակետ՝ սահմանվել են հետևյալ տվյալները.

- *զինված ուժերում բացակայում են խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժամիջոցների կիրառման դեպքերի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու համար նախատեսված հատուկ մեխանիզմներ և կառույցներ,*
- *դեպքերի մասին հնարավոր է զեկուցել աշխատանքային օրերին ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի կամ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի թեժ գծի միջոցով:*

Սահմանված չափելի ցուցանիշները հետևյալն են.

- *ընդունվել են ենթաօրենսդրական ակտեր (կառավարության որոշումներ, նախարարների հրամաններ), որոնք սահմանում են անանուն հաղորդումներ ներկայացնելու իրավական հիմքերը և ընթացակարգերը՝ հիմնվելով միջազգային չափանիշների և լավագույն փորձի ուսումնասիրության վրա,*
- *Ազգային ժողով են ներկայացվել «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և դրան կից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական առաջարկներ,*
- *առկա են անանուն հաղորդումների ընթացակարգեր:*

Չնայած այն բանին, որ այս գործողության ժամկետներն ավարտվում են 2024 թվականի երկրորդ կեսին, «Խաղաղության երկխոսություն» հկ-ն գործընթացների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում է ներկայացրել ՊՆ: Կազմակերպությունը նաև փորձել է հասկանալ՝ արդյո՞ք միջազգային փորձը հաշվի է առնվել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու համար նախատեսված մեխանիզմների մշակման գործում, ինչպես նախատեսվում էր գործողությունների ծրագրի 2.2 գործողությամբ:

Նախարարությունից ստացված պատասխան-նամակը, սակայն, ուղղակիորեն չի պատասխանում միջազգային փորձի կիրառմանը վերաբերող հարցին: Դրա փոխարեն այն կենտրոնանում է ներքին կանոնակարգերի, համակարգերի և կառավարության որոշումներին հավատարիմ մնալու վրա՝ նշելով, որ հաղորդումները կարող են ներկայացվել hotline@mil.am էլեկտրոնային հասցեին, և որ, կառավարության որոշման համաձայն, ներքին և արտաքին զեկուցումները արձանագրվում են առանձին մատյաններում՝ անանունությունը երաշխավորելու նպատակով: Հստակության բացակայությունն ընդգծում է հիմնական չափելի ցուցանիշի՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցման ապահովման հարցում զգացվող բացը:

Նշված պատասխանը վկայում է նաև, որ ՊՆ թեժ գիծը դիտարկվում է որպես անանուն զեկուցումներ հաղորդելու մեխանիզմ: Այնուամենայնիվ, այն չի անդրադառնում թեժ գծից և էլեկտրոնային հաղորդագրություններից զատ հատուկ միջոցների և կառույցների բացակայության հարցին (ինչպես նշված է ելակետային տվյալներում): Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մինչդեռ գործում է զեկուցման համակարգ, այն հավանաբար լիովին չի բավարարում անանուն զեկուցումների ավելի վստահելի և մասնագիտացված համակարգ ունենալու շուրջ ելակետային ակնկալիքները: Ավելին, պատասխանը մանրամասներ չի տրամադրում ո՛չ այս նախաձեռնությանը (գործողություն 2.2) վերաբերող որևէ նոր իրավական շրջանակների վերաբերյալ, ո՛չ էլ որևէ հղում է կատարում այնպիսի ուսումնասիրությունների կամ վերլուծությունների վրա, որոնք կնպաստեին այդ մեխանիզմները միջազգային լավագույն փորձին համապատասխանցնելուն:

Պատասխանն, ընդհանուր առմամբ, վկայում է անանուն հաշվետվության մեխանիզմների ստեղծման հարցում մասնակի առաջընթացի մասին, սակայն 2.2 գործողությունում նշված հիմնական ակնկալիքներն ու չափելի ցուցանիշները լիովին բավարարելու համար անհրաժեշտ են լրացուցիչ պարզաբանումներ և մշակումներ:

Գործողություն 2.5. Վերապատրաստել զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով:

Ըստ փաստաթղթի՝ գործողությունն ընթացքի մեջ է և կշարունակվի մինչև 2025 թվականի երկրորդ կիսամյակ:

Որպես ելակետ՝ սահմանվել են հետևյալ տվյալները.

- *2020 թվականի դեկտեմբերից մինչև 2022 թվականի հունվարն ընկած ժամանակահատվածում զինված ուժերի հրամանատարական կազմի 14 տոկոսը և ռազմական ոստիկանության ղեկավար և ոչ ղեկավար կազմի 17 տոկոսը վերապատրաստումներ են անցել դաժան վերաբերմունքի կանխարգելման թեմայով: Բացի այդ, զինված ուժերում ենթակաների նկատմամբ բռնության դեպքերի և զինծառայողների կողմից ինքնավնասման*

դեպքերի վերաբերյալ վերը մեջբերված վիճակագրությունը նույնպես դիտարկվում է որպես ելակետային տվյալ այս գործողությունը հիմնավորելու համար:

Գործողության համար սահմանվել է երեք հիմնական չափելի ցուցանիշ.

- *զինված ուժերի հրամանատարական կազմի, ինչպես նաև ռազմական ոստիկանության ղեկավար և ոչ ղեկավար կազմի 80 տոկոսը կանցնեն վերապատրաստումներ,*
- *վերապատրաստումները հիմնված են լինելու ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված միջազգային իրավական չափանիշների վրա և տևելու են չորս ակադեմիական ժամ,*
- *հետվերապատրաստական գնահատման արդյունքում մասնակիցները կցուցադրեն ստացած գիտելիքների առնվազն 80 տոկոսը:*

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանության ՀՀ ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների պլանի իրականացման մասին հաշվետվության՝ 2024 թվականի առաջին կիսամյակի դրությամբ, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ, արդեն իրականացվել է վերապատրաստական երկու կուրս՝ «Կյանքի իրավունքի» և «Դաժան վերաբերմունքի կանխարգելման» թեմաների շուրջ: Այս ժամանակահատվածում զորամասերում պարբերաբար անց են կացվել միջազգային և տեղի փորձագետների կողմից կազմակերպված «Կյանքի իրավունքի» վերաբերյալ իրազեկման միջոցառումներ:

Արդյունքում՝ վերապատրաստվել է զինված ուժերի հրամանատարական կազմի 20 տոկոսը, ռազմական ոստիկանության հրամանատարական կազմի 20 տոկոսը և ռազմական ոստիկանության ընդհանուր աշխատակազմի 20 տոկոսը:

Գործողություն 2.5-ի իրականացման գործընթացի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով «Խաղաղության երկխոսություն» հկ-ն դիմել է ՊՆ-ին՝ խնդրելով պատասխանել հետևյալ հարցերին.

1. «Խաղաղության երկխոսություն» հկ-ին ՀՀ դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ վերջին երեք տարիների ընթացքում զինված ուժերում հարուցված 21 քրեական վարույթից 16-ում ներգրավված է եղել ռազմական ոստիկանության աշխատակազմը: Այս 16 քրեական վարույթների մեջ ներգրավված ռազմական ոստիկանության զինծառայողներից քանի՞սն են մասնակցել ռազմական ոստիկանության աշխատակազմի համար 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով կազմակերպված վերապատրաստումներին,
2. կա՞ն արդյոք վերապատրաստումներից ստացած գիտելիքները այնուհետ ՌՈ մյուս կամ համակարգին նոր միացած աշխատակիցներին փոխանցելու համար նախատեսված գործող մեխանիզմներ,

3. 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի իրականացման արդյունքում ռազմական ոստիկանության աշխատակազմի 29 տոկոսը վերապատրաստումներ է անցել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով: Արդյո՞ք թարմացումներ են եղել վերապատրաստումների ծրագրի մեջ, և արդյո՞ք նախկին վերապատրաստումներին ներկայացած աշխատակիցներն առաջիկա վերապատրաստումներին ևս մասնակցելու կարիք ունեն:

Ի պատասխան՝ ՊՆ-ից նշում են, որ քրեական վարույթներում ներգրավված ռազմական ոստիկանության զինծառայողների մասին անվանական տվյալներ չկան: Այդ տվյալների, դրանք պահպանելու գործուն մեխանիզմների կամ գոնե գրառումների բացակայությունը, որը թույլ կտար անմիջականորեն կապ տեսնել վերապատրաստումների և դրանցում շոշափված թեմաներին առնչվող քրեական վարույթներով հետապնդվող աշխատակիցների միջև, լուրջ մտահոգություններ է առաջացնում նախարարության՝ մշտադիտարկելու և գնահատելու կարողության վերաբերյալ: Մշտադիտարկման նման և այլ գնահատման մեխանիզմների բացակայության պարագայում դժվար է դատել վերապատրաստումների արդյունավետության մասին:

Նախարարությունը նաև նշել է, որ ռազմական ոստիկանության նոր հավաքագրված անձնակազմը ներգրավվում է տարբեր, այդ թվում՝ դաժան վերաբերմունքի կանխարգելման թեմայով վերապատրաստումներին, և որ զանազան թեմաների շուրջ կրթական ծրագրերը պարբերական բնույթ են կրում:

Նշվում է, որ վերապատրաստումներն ընթացքի մեջ են, սակայն նոր ընդունված զինծառայողներին կարևոր թեմաների շուրջ (ինչպիսիք են խոշտանգումները կամ դաժան վերաբերմունքը) վերապատրաստումներում ներգրավելու համար նախատեսված հստակ մեխանիզմների բացակայությունը տարակուսելի է: Չկա որևէ հիշատակում առ այն, որ առկա են համակարգված, հետևողական մեխանիզմներ, որոնք կարող են երաշխիք հանդիսանալ, որ ամբողջ անձնակազմը, հատկապես նրա այն անդամները, որոնք աշխատանքի են ընդունվել այս վերապատրաստումների իրականացումից հետո, պատշաճ գիտելիք կարող են ստանալ թեմայի շուրջ: Սա կասկածի տակ է դնում վերապատրաստումների հետևողական ու համապարփակ բնույթը:

Նախարարությունը նշել է, որ ծառայողները շարունակում են մասնակցել մի շարք վերապատրաստումների, որ ուսուցողական ծրագրերը պարբերական բնույթ են կրում, սակայն ոչ մի հստակեցում չի տվել՝ արդյոք վերապատրաստումների ծրագրերը ենթարկվել են որևէ փոփոխությունների, կամ արդյոք նախկին վերապատրաստումներին մասնակցած զինծառայողների համար անհրաժեշտություն կա մասնակցել ընթացիկ վերապատրաստումներին: Թեև նախարարությունը պնդում է, որ պարբերաբար իրականացվում են կրթական ծրագրեր, և դրանց մասնակցում են տարբեր կոչում ունեցող ծառայողներ, վերապատրաստումների ծրագրի մեջ փոփոխությունների մասին ուղղակի

պատասխան, այնուամենայնիվ, չկա: Նախկինում վերապատրաստված ծառայողների փոփոխված ծրագրով վերապատրաստումներին մասնակցության նպատակահարմարության հարցի շուրջ հստակության բացակայությունը հնարավոր բացթողում է ենթադրում գիտելիքի շարունակական բարելավման և համալրման ապահովման հարցում:

Չնայած դաժան վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված վերապատրաստումների շարունակական ծրագրերին՝ նախկին ժամկետային ծառայողների հարցազրույցները վկայում են, որ սպաների կողմից կոպիտ վերաբերմունքի և բռնության դեպքերը դեռևս շարունակվում են: 2020-2024 թվականների ընթացքում պարտադիր ժամկետային ծառայություն անցած 60 հարցվողից 20-ը հայտնել է, որ անձամբ ենթարկվել է դաժան վերաբերմունքի, ևս 36-ը նմանատիպ վերաբերմունք է նկատել իր ծառայակից ընկերների նկատմամբ:

Երկու հոգի հայտնել է, որ անհարգալից վերաբերմունքի է արժանացել ռազմական ոստիկանության կամ քննչական մարմինների կողմից, այդ թվում՝ սպառնալիքների, հայհոյանքների, ֆիզիկական բռնության և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների տեսքով: Վեց հարցված նշել է, որ իր ծառայակիցներն անարգանքի են արժանացել նշված հաստատություններում: Ավելին, ըստ երկու հարցվողի՝ իրենց ծառայակից ընկերներին տարել են այս հաստատություններ, որտեղ ստիպել են ցուցմունք տալ կամ խոստովանել:

Ընթացիկ վերապատրաստումների ծրագրերի, տեղում առկա իրավիճակի և քրեական վարույթների քանակի միջև կապի բացակայությունն ավելի խիստ մտահոգություն է առաջացնում: Եթե վերապատրաստումներ անցած անձնակազմի մի զգալի մասը շարունակում է հանցավոր արարքներ թույլ տալ կամ, համենայնդեպս, կասկածվում է դրանում, ապա կասկածի տակ է առնվում վերապատրաստական ծրագրերի արդյունավետությունն ընդհանրապես: Այս ծրագրերը պատշաճ կերպով անդրադառնո՞ւմ են, արդյոք, դաժան վերաբերմունքի դեպքերի առանցքային հիմնապատճառներին, թե՞ պարզապես բացակայում է հետևողականությունը՝ վերապատրաստումների արդյունքում ձեռք բերած իմացությունը գործնականում կիրառվելուն հետամուտ լինելու հարցում:

«Խաղաղության երկխոսություն» հկ-ն առաջիկայում ևս կշարունակի հետևել այս գործողության իրականացմանը:

Գործողություն 2.7. ՀՀ պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում 1 մասնագետի պաշտոնի անձնագրում սահմանել հոգեբանության բարձրագույն կրթություն ունենալու պարտադիր պայման:

2023-2025 թվականների գործողությունների ծրագրի համաձայն՝ այս գործողությունը պլանավորվում է ավարտին հասցնել մինչ 2025 թվականի ավարտը:

- *Պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում հոգեբանի հաստիքի բացակայությունը սահմանվել է որպես այս գործողության ելակետ:*

Սահմանվել է հետևյալ չափելի ցուցանիշը.
- *մեկ մասնագետի հաստիքի համար աշխատանքային նկարագրի մեջ պարտադիր է հոգեբանության ոլորտում բարձրագույն կրթություն ունենալու պայմանը:*

2023-2025թթ. գործողությունների ծրագրի իրականացման մասին կառավարության հաշվետվության մեջ այս գործողությանը վերաբերող որևէ առաջընթաց չի գրանցվել:

Այս փուլում «Խաղաղության երկխոսություն» հկ-ն հավելյալ դիտարկումներ չունի գործողության վերաբերյալ:

Գործողություն 2.8. Ամրապնդել ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները:

Գործողության ավարտն ակնկալվում է 2024 թվականի առաջին կիսամյակին:

Գործողության համար սահմանված ելակետային տվյալներն են.

- *ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում ստեղծվել է պաշտոնատար անձանց կողմից խոշտանգումների և բռնություն պարունակող վերաբերմունքի դեպքերի հետաքննության առանձին մասնագիտացված բաժին: Ստորաբաժանման աշխատակազմի համալրման համար նախատեսված է ութ հաստիք. պետ (1), պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ) (2), հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ (2) և հատկապես կարևոր գործերով քննիչ (3): Նշված հաստիքներից վեցն արդեն զբաղված են: Ստորաբաժանումը գերծանրաբեռնված է, ինչն ազդում է գործերի քննության արագության վրա:*

Գործողության համար սահմանվել են հետևյալ չափելի ցուցանիշները.
- *ընդլայնվել է ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների դեպքերը քննող մասնագիտացված ստորաբաժանման կազմը:*

2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մասին կառավարության հաշվետվությունում նշվում է, որ գործողությունը հաջողությամբ ավարտվել է՝ պարզաբանելով, որ «…երկու թափուր պաշտոն զբաղեցնելու համար նշանակվել է երկու ինքնավար պաշտոն, ինչի արդյունքում բոլոր ութ հաստիքները համալրվել են»:

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից հավելյալ դիտակումներ չկան սույն գործողության վերաբերյալ:

Գործողություն 2.12. Ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ:

Գործողության վերջնաժամկետը նշանակված է 2024 թվականի երկրորդ կիսամյակին:

- *Ելակետային տվյալները ենթադրում են, որ ՀՀ արդարադատության նախարարությունն արդեն իսկ ուղեցույցներ է մշակել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» տերմինների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համապատասխան:*
- *Չափելի ցուցանիշն այն է, որ «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» տերմինների գաղափարը հստակ սահմանում է ստացել՝ հիմք հանդիսանալով դրանց մեկնաբանման և կիրառման համար:*

Բացի այդ, 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը 2024 թվականի համար սահմանել է երկու հատուկ թիրախ.

- *1-ին կիսամյակ*. ՀՀ արդարադատության ակադեմիան պետք է ընդունի ուղեցույց իրավապահ մարմինների համար այս հասկացությունների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ, որը կօգտագործվի դասընթացների և վերապատրաստումների ժամանակ,
- *2-րդ կիսամյակ*. ուղեցույցի հիման վրա քննչական մարմինների և դատախազությունների ղեկավարները պետք է այդ հայեցակարգերի կիրառումն ապահովող ներքին իրավական ակտեր ընդունեն:

Հարկ է նշել, որ նախորդ՝ 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված 15-րդ գործողությունը ևս նմանատիպ համատեքստ ուներ, սակայն նախքան գործողությունների ծրագրի իրականացման ավարտն այն այդպես էլ չիրականացվեց: Այնուամենայնիվ, 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի իրականացման մասին հաշվետվության մեջ նշվում է, որ այս գործողությունը հաջողությամբ ավարտվել է, անգամ՝ վերջնաժամկետից շուտ: Հաշվետվության մեջ պարզաբանվում է, որ դրա ընթացքում արդարադատության ակադեմիան տարբեր ուղեցույցներ է կիրառել, որոնք հրապարակվել են Եվրոպական միության աջակցությամբ և Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հետ համագործակցության շնորհիվ: Այս նյութերն օգտագործվել են վերապատրաստումների ծրագրերի, հմտությունների զարգացման դասընթացների և մասնագիտական զարգացվածության ծրագրերի համար և հասանելի են ակադեմիայի պաշտոնական կայքում:

Կառավարության հաշվետվությունից, սակայն, պարզ չէ, թե ինչ է նշանակում այս գործողության «հաջող ավարտը». արդյո՞ք դա վերաբերում է միայն առաջին կիսամյակի համար նախատեսված թիրախին, թե՞ գործողությունը համարվում է լիովին ավարտված: Սա հատկապես կարևոր է ցուցանիշի («ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» տերմինների գաղափարը հստակ սահմանում է ստացել) առնչությամբ, ինչը ենթադրում է քննչական մարմինների և դատախազության կողմից ներպետական իրավական ակտերի ընդունում՝ այդ հայեցակարգերի կիրառումն ապահովելու համար:

Գործողություն 2.13. Երևանում և առնվազն 3 մարզերում ստեղծել խոշտանգումից տուժած անձանց աջակցության (իրավական, հոգեբանական, սոցիալական և այլն) կենտրոններ, որոնց միջոցով կբարելավվի խոշտանգումներից տուժած անձանց առողջական վիճակը:

Վերջնաժամկետը՝ 2025 թվականի երկրորդ կիսամյակ:

- *Գործողության համար սահմանված ելակետային տվյալները ցույց են տալիս, որ մինչև 2022 թվականը Երևանում գործել է խոշտանգումներից տուժած անձանց աջակցության կենտրոն: Վերջինս, սակայն, դադարեցրել է իր գործունությունը՝ ֆինանսավորում չունենալու պատճառով: Այժմ ՀՀ տարածքում խոշտանգումներից տուժած անձանց աջակցման կենտրոններ չկան:*
- *Գործողության համար սահմանվել է միայն մեկ չափելի ցուցանիշ, ըստ որի՝ խոշտանգումներից տուժած անձանց աջակցության մեկ կենտրոն կգործի Երևանում, ևս մեկը՝ ՀՀ մարզերից որևէ մեկում:*

Գործողություն 2.13-ով, սակայն, սահմանվում էր բացել առնվազն չորս կենտրոն՝ մեկը Երևանում, և մեկական կենտրոն ՀՀ ցանկացած երեք մարզերում:

«Խաղաղության երկխոսություն» հկ-ն այս փուլում հավելյալ տեղեկատվություն չի կարող հաղորդել, քանի առաջընթացի մասին որևէ տեղեկատվություն հասանելի չէ:

ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանության ՀՀ ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրն առաջընթաց է ցուցաբերում մի շարք առանցքային ոլորտներում: Սակայն, մինչ կառավարությունը հայտնել է որոշ գործողությունների ավարտի մասին, մի քանի բաց և չլուծված հարցեր դեռևս մնում են՝ պահանջելով լրացուցիչ պարզաբանումներ:

Հիմնական մարտահրավերներից մեկը՝ համոզվելն է, որ կիրառվող մեխանիզմները (մասնավորապես՝ խոշտանգումների մասին զեկուցելու և դրանց դեմ պայքարի մեխանիզմները) համապատասխանեցվեն միջազգային չափանիշներին: Բացթողումներ են նկատվում և՛ հաղորդված արդյունքների հստակության, և՛ ծրագրում ընդգծված տարբեր գործողությունների հետևողական իրականացման հարցում: Ոչ հետևողական մոտեցումն ընդգծում է գործողությունների ընթացքի մասին ավելի խիստ հաշվետվողականության և թափանցիկության անհրաժեշտությունը, ինչպես նաև հիմնական գործողությունների կարգավիճակի վերաբերյալ ավելի հստակ հաղորդակցության անհրաժեշտությունը:

Ավելին, մի շարք հակասություններ դեռևս պահպանվում են: Մինչ կառավարությունը քայլեր է ձեռնարկում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են վերապատրաստումները և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, այդ ջանքերի արդյունավետությունը խաթարվում է պաշտպանության ոլորտի համակարգային խնդիրների պատճառով: Զեկուցման մեխանիզմների նկատմամբ վստահության բացակայությունը, ինչպես նաև դաժան վերաբերմունքի շարունակական դեպքերը, նույնիսկ վերապատրաստումներից հետո, հուշում են, որ ավելի խորը կառուցվածքային բարեփոխումներ կարող են անհրաժեշտ լինել դաժան վերաբերմունքի և չարաշահումների հիմքում ընկած պատճառները լիովին վերացնելու համար:

Ընդհանուր առմամբ, վերհանվել են հետևյալ բնույթի խնդիրներ.

- Պաշտպանության նախարարությունում գործող թեժ գիծը դիտարկվում է որպես անանուն զեկուցումներ հաղորդելու մեխանիզմ: Նախարարությունը չի դիտարկում թեժ գծից և էլեկտրոնային հաղորդագրություններից զատ հատուկ միջոցների և կառույցների առկայության կարևորությունը, չնայած այն հանգամանքին, որ մինչ այժմ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ թեժ գծով որևէ բողոք չի ստացվել:
- Չնայած այն բանին, որ ՊՆ-ն թեժ գծով որևէ բողոք չի ստացել խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ, հատկապես զեկուցումներ հաղորդելու այս մեխանիզմի նկատմամբ վստահության բացակայության պատճառով, նախարարությունը կարծում է, որ փորձառու հոգեբանի առկայությունը կարող է նպաստել մարդու իրավունքների հնարավոր խախտումներին ավելի արդյունավետ արձագանքմանը: Սակայն կառույցի ներսում փորձառու

մասնագետի ներկայությունը հնարավոր է, որ արդյունավետ չլինի, եթե զեկուցումների մեխանիզմի նկատմամբ վստահությունը չվերականգնվի:

- Թեև նախարարությունը պնդում է, որ պարբերաբար իրականացվում են խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ կրթական ծրագրեր, որոնց մասնակցում են տարբեր կոչում ունեցող ծառայողներ, նախկինում վերապատրաստված ծառայողների փոփոխված ծրագրերով վերապատրաստումներին մասնակցության նպատակահարմարության հարցի շուրջ հստակության բացակայությունը հնարավոր բացթողում է՝ գիտելիքի շարունակական բարելավման և համալրման ապահովման առումով: Չկա որևէ հիշատակում այն մասին, որ առկա են համակարգված, հետևողական մեխանիզմներ, որոնք կարող են երաշխավորել, որ ամբողջ անձնակազմը, հատկապես այն անդամները, որոնք աշխատանքի են ընդունվել այս վերապատրաստումների իրականացումից հետո, պատշաճ գիտելիքներ կարող են ստանալ թեմայի վերաբերյալ:
- ՀՀ քրեական օրենսգիրքը հստակ պատասխանատվություն չի սահմանում անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառման համար: Իրավական պրակտիկայում զինված ուժերի ներսում խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի դեպքերը հաճախ դասակարգվում են որպես պաշտոնական լիազորությունների անցում կամ իշխանության չարաշահում:
- Խոշտանգումների և վատ վերաբերմունքի հետ կապված դեպքերի վերաբերյալ հարուցված և տրամաբանական ավարտին հասցված գործերի թվի մեծ տարբերությունը մտահոգություն է առաջացնում քննության և դատական համակարգի ընդհանուր արդյունավետության վերաբերյալ:
- Հաշվի առնելով որևէ դատական ատյանի կողմից խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի դեպքերը հաստատող վերջնական որոշումների բացակայությունը՝ հարց է առաջանում, թե ով է լինելու խոշտանգումից տուժած անձանց աջակցության կենտրոնների շահառուն:

Ամփոփելով՝ թեև կառավարությունը կարևոր քայլեր է ձեռնարկել մարդու իրավունքների խնդիրները լուծելու ուղղությամբ, դեռևս շատ անելիքներ կան գործողությունների ծրագրի լիարժեք և արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Անընդհատ մշտադիտարկումը, ավելի հստակ հաշվետվողականությունը և միջազգային լավագույն փորձին համապատասխանեցումն էական նշանակություն կունենան ծրագրի նպատակներին հասնելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշտադիտարկման համար շահավետ կարող է լինել ծրագրում նշված գործողությունների առաջընթացի վերաբերյալ ավելի մանրամասն թարմացումների տրամադրելը: Յուրաքանչյուր փուլի կարգավիճակի հստակեցումը կարող է օգնել խուսափել անորոշությունից, համաձայնության բերել շահագրգիռ բոլոր կողմերին:
- Հաշվի առնելով խոշտանգումների վերաբերյալ անանուն հաղորդումների մեխանիզմների կարևորությունը՝ մեծ արժեք կարող է ունենալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը: Արտաքին վերահսկողությունը և անանունության ավելի խիստ պաշտպանությունն ամրապնդելու արդյունքում հնարավոր կլինի վերականգնել համակարգի նկատմամբ վստահությունը:
- Ի լրումն անհատական գործողությունների իրականացման, արժեքավոր դեր կարող է խաղալ պաշտպանության ոլորտում ավելի խորը համակարգային խնդիրների լուծման վրա կենտրոնացումը: Վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմների ամրապնդումը կօգնի լուծել այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են անպատժելիությունը և վախը հաշվեհարդարից:
- Համոզվելու համար, որ վերապատրաստման ծրագրերն արդյունավետ կերպով հասնում են ճիշտ անձնակազմին, հատկապես նրանց, ովքեր ներգրավված են դաժան վարքագծի դեպքերի մեջ, վերապատրաստումների մասնակիցների վերաբերյալ տեղեկությունների համապարփակ փաստաթղթավորման և վերահսկման մշակման գաղափարը կարող է օգտակար լինել: Բացի այդ, վերապատրաստման ծրագրերի պարբերական գնահատումները կարող են օգնել գնահատել դրանց արդյունավետությունը և բացահայտել հետագա շտկումների կարիք ունեցող ոլորտները:
- Արդյունավետ կլինի նաև համակարգված հետևողական մեխանիզմների ներդրումը, ինչպիսիք են գիտելիքի թարմացման համար նախատեսված դասընթացները կամ մենթորական ծրագրերը, որպեսզի համալրեն և ամրապնդեն նախնական վերապատրաստումներից ստացած գիտելիքը, մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան շարունակական բարելավում ապահովեն նաև նոր ընդունված աշխատակիցների համար:
- Աջակցման կենտրոնների ընդլայնումը, ինչպես ի սկզբանե նախատեսված էր, կարող է ծառայությունների ավելի լայն շրջանակ առաջարկել խոշտանգումներից տուժած անձանց: Մինչև 2025 թվականի երկրորդ կիսամյակ բոլոր չորս կենտրոնների գործունեության ապահովումը կնպաստի համապարփակ իրավական, հոգեբանական և սոցիալական աջակցության հասանելիությանը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ կլինի անդրադառնալ այն հարցին, թե ովքեր են լինելու այդ աջակցության կենտրոնների շահառուները՝ հաշվի առնելով քննչական գործընթացի և դատական համակարգի ընդհանուր ցածր արդյունավետությունը, երբ չկան ավարտին հասցված գործեր ու դատարանի կողմից խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի դեպքերը հաստատող վերջնական որոշումներ:

- Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերի հետ կապված դատական գործընթացների արդյունավետության բարձրացումը, միջազգային լավագույն փորձին համահունչ, կարող է արժեքավոր քայլ լինել: Ավելի հստակ ժամկետները և գործընթացների ավելի թափանցիկ բնույթը, հավանաբար, կօգնեն ավելի մեծ վստահություն ձևավորել իրավական համակարգի նկատմամբ և կբարձրացնեն տուժածների աջակցության համակարգերի արդյունավետությունը:

Զեկույցը հրապարակվել է ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Զեկույցում ներկայացված կարծիքներն ու վերլուծությունները հեղինակներինն են և չեն ներկայացնում ժողովրդավարության զարգացման հիմնադրամի կարծիքներն ու դիրքորոշումները:

© 2024. «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ
Հասցե: Մյասնիկյան 12, բն. 40,
2001, վանաձոր, Հայաստան;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. Փոստի հասցե: ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: https://www.peacedialogue.am